

Ե Փ Ր Ա Տ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

ԵՐԵՎԱՆԻ 4 ՅՈՒՆԻՍ 1946

ՁԵՌՔԷ ՀԱՏԸ 5 Ս. Դ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԹԻՒ 2648

Ն Ե Ր Ք Ա Ղ Թ Ի Պ Ա Տ ՈՒ Ի Ր Ա Կ Ն Ե Ր Ը

Պ Ե Յ Ր ՈՒ Թ Հ Ա Ս Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Է Ն

Թերթիս խմբագրատեղը ԸՆԿ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ
այս առաջատ մեղի կը հեռաձայնէ Պէյրուսէն.

Շաբաթ կեսօրին օդանաւով Պէյրուս հասան Ներ-
գաղի գործերով զբաղելու համար Սովետ Հայաստանի
նախարարաց խորհուրդի չորս ներկայացուցիչները, ո-
րոնցմէ երկուքը պիտի գործեն Սիւրիոյ մէջ եւ երկու-
քը՝ Ի Լիբանան:

Ներգաղի Սուրիոյ Լիազօր ներկայացուցիչներն
են Պ. Պ. ՀՄԱՅՏԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ եւ ՀՄԱՅՏԱԿ
ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, իսկ Լիբանանի Լիազօր ներկայացու-
ցիչներն են Պ. Պ. ԶԱԻԷՆ ԶԱՐԱԵԱՆ եւ ՄԻՔԱՅԷԼ ԿԱ-
ՐԱՊԵՏԵԱՆ:

Հալէպահայ ժողովուրդին անուշով բարեգալուստ
կը մաղթենք մեր աւետարեք հիւրերուն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՎԱՂՈՒԱՆ ԹԻՒՈՎ

Կարգացէ՛ք երեւանի Ներգաղթի Կեդր. Կոմիտէի
նախագահ Բ. Աստուածատուրեանի յայտարարութիւն-
նը Փրակայի թղթակցին:

— Ներգաղթի՛ք ծովէն եւ ցամաքէն:

— Ներգաղթողներու ընդունելու համար կայան-
ներ կազմակերպուած են Պաթումի նաւահանգիստին
մէջ եւ Զուլֆայի կայարանը:

— Հայաստանի մէջ 40 միլիոն ուսպլի հաւաք-
ւած է ներգաղթողներուն համար:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

Պաղտատ.— Պ. Րէշիտ-Էլ-Օմարի կազմեց
Իրաքեան նոր գահլիճը:

ԲԱՐԻՉ.— Ֆրանսական ընտրութեան նախօր-
եակին Էնսքիի Ֆրանսէն ժողովուրդին կարծիքին
վրայ յենլով, հետեւեալ համեմատութիւնները
կուտայ արդիւնքին նկատմամբ.—

% 26 Համայնավարներուն

% 26 Ընկերվարականներուն

% 21 Բրիտանեայ գէմկրատեաններուն

ՅՐԱՆՍՈՒՅԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՋԻՆ ԱՐԴԻՆՔԸ

Բարիզէն եւ Լոնտոնէն ձայնասփռուած լուրե-
րու համաձայն ֆրանսական ընտրութիւնները ցարգ-
տուած են հետեւեալ արդիւնքները.

Համայնավարներ՝ 140 աթոս: Միայն Բարիզի
եւ Սէնի շրջանին մէջ 26 աթոս ապահոված են:

Ընկերվարականներ՝ 115 աթոս:

Կաթոլիկներ՝ 161 աթոս: Արմատականներ 12
աթոս: Ազատ կաթոլիկներ 40 աթոս: Եւ միւս
կուսակցութիւնները 3 աթոս:

Սէնի շրջանին մէջ ընկերվարականները ապա-
հոված են 10 աթոս, իսկ կաթոլիկներ 11 աթոս:

ԱՆԳԱՐԱ.— Յունիս մէկի առաւել, Մշոյ եւ
արեւելեան Անատոլիոյ գաւառներուն մէջ երկ-
րաշարժի զօրաւոր ցնցումներ տեղի ունեցած են:
Վարժի փոքրիկ գիւղին մէջ, բազմաթիւ տուններ
քանդուած են. 47 հոգի մեռած եւ 22 վիրաւոր-
ներ գտնուած են: